Հավելված
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի
<<13>>-----12-----------------2015թ.
թիվ 111-----Ա հրամանի

ԿԱՐԳ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի սովորողներին գիտահետազոտական աշխատանքներում ընդգրկելու և գիտական խմբակների գործունեության կարգը (այսուհետ՝ կարգ) կարգավորում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի սովորողներին գիտահետազոտական աշխատանքներում ընդգրկելու գործընթացը և ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի սովորողների գիտական խմբակների (այսուհետ՝ գիտական խմբակներ) գործունեությունը:
1.2. ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի սովորողներին գիտահետազոտական աշխատանքներում ընդգրկելու և գիտական խմբակների գործունեության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական աշխատանքների բաժինը:
1.3. Կարգի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարվում են ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի հրամանով:

2. ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի սովորողներին գիտահետազոտական աշխատանքներում ընդգրկելու և գիտական խմբակների գործունեության նպատակն է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի սովորողների ստեղծագործական մտածողության զարգացումը, մտահորիզոնի ընդլայնումը, նրանց կողմից ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքի հմտություններ ձեռք բերելը, ինչպես նաև ՀՀ ոստիկանության համակարգի գիտամանկավարժական կադրերի պատրաստման համար թեկնածուների հետագա ընտրությունը:
2.2. ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի սովորողներին գիտահետազոտական աշխատանքներում ընդգրկելու և գիտական խմբակների գործունեության խնդիրներն են՝

ա) սովորողների մոտ ինքնուրույն գիտահետազոտական գործունեության և համատեղ գիտական աշխատանքի կատարման հմտությունների ձևավորումը,
բ) սովորողների մոտ իրենց գիտելիքները շարունակաբար խորացնելու պահանջմունքի ձևավորումը և գործնական աշխատանքում դրանք ստեղծագործորեն կիրառելու հմտության զարգացումը,
գ) այլ բուհերի ուսանողական գիտական կազմակերպությունների հետ համագործակցության հաստատումը,
դ) գիտամանկավարժական կադրերի պատրաստման համար թեկնածուների պատրաստումն ու ընտրությունը,
ե) ոստիկանության գործունեության հետ կապված հիմնախնդիրների քննարկումը:

3. ԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3.1. Գիտական խմբակները ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում են ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի հրամանով:
3.2. Գիտական խմբակ ստեղծելու մասին հրամանում նշվում է կրթահամալիրի այն ամբիոնը (ամբիոնները), որին կից ստեղծվում է գիտական խմբակը, գիտական խմբակի անվանումը և գիտական խմբակի ղեկավարը:
3.3. Գիտական խմբակ ստեղծելու մասին հրամանի հիման վրա մինչև սեպտեմբերի 5-ը ամբիոնի (ամբիոնների համատեղ) նիստում հաստատվում է գիտական խմբակի կազմը, գիտական խմբակի ավագը և գիտական խմբակի աշխատանքների տարեկան պլանը: Ամբիոնի նիստի արձանագրության քաղվածքը ներկայացվում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական աշխատանքների բաժին:
3.4. Գիտական աշխատանքների բաժնի կողմից մինչև սեպտեմբերի 10-ը կազմվում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խմբակների աշխատանքների ընդհանուր տարեկան պլանը, որը հաստատվում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի առաջին տեղակալի կողմից:
3.5. Գիտական խմբակի կողմից ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքի արդյունքները մինչև հուլիսի 10-ը ամփոփվում են ամբիոնի (ամբիոնների համատեղ) նիստում: Ամբիոնի նիստի արձանագրության քաղվածքը ներկայացվում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական աշխատանքների բաժին:
3.6. Գիտական աշխատանքների բաժնի կողմից մինչև հուլիսի 15-ը կազմվում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խմբակների աշխատանքների ընդհանուր տարեկան հաշվետվությունը, որը քննարկվում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի նիստում:
3.7. Գիտական խմբակի կազմում կամավորության սկզբունքով ընդգրկվում են ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի բակալավրիատի և մագիստրատուրայի բարձր առաջադիմություն և գիտահետազոտական աշխատանքի հակվածություն ունեցող սովորողները: Գիտական խմբակի կազմում ընդգրկվում են առնվազն 5 սովորողներ:
3.8. Ուսումնական տարվա ընթացքում գիտական խմբակի կազմը կարող է

4. ԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

4.1. Գիտական խմբակների գործունեության հիմնական ուղղություններն են՝

ա) գիտական հետազոտությունների իրականացումը,

բ) մասնակցությունը գիտական կոնֆերանսների, կլոր սեղան-քննարկումների, վիկտորինաների և գիտական աշխատանքների մրցույթների կազմակերպմանը և անցկացմանը,

գ) գիտնականների և փորձառու պրակտիկ աշխատակիցների հետ հանդիպումների կազմակերպումը և մասնակցությունը:

4.2. Գիտական խմբակների գործունեության արդյունքները կարող են՝

ա) ներկայացվել գիտական կոնֆերանսին կամ կլոր սեղան-քննարկմանը զեկույցի ձևով,

բ) ընդգրկվել գիտական աշխատանքների ժողովածուի մեջ,

գ) ներդրվել կրթահամալիրի ուսումնական գործընթացում: